Արձանագրություն N 2
«ՀԱԻ-ԲԸԱՊՁԲ-16/3» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

*ք. Երևան, Կոմիտաս 49/4*

*«01» «11» 2016թ*
*ժ.14:30*

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Սեդրակյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Օհանյանը, Ս.Մարգարյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Ղազարյանը

1. Բաց ընթացակարգի հայտերի բացման մասին
(Ա.Սեդրակյան)

Ընդունել ի գիտություն, որ սահմանված ժամկետում և սահմանված կարգի պահանջներին համապատասխան հայտեր են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| | | | |
|---|---|---|---|
| 1 | «Դի.Ջի էյ.Թի.» ՍՊԸ | - | ք. Երևան, Գայի պող. 27շ. ,1 բն., հեռ.(055) 403020, էլ.հասցե՝ DGATLLC@mail.ru, ՀՎՀՀ 01240756, տնօրեն Գ.Ղազարյան |
| 2 | «Կոնցեռն -Էներգոմաշ» ՓԲԸ | - | ք. Երևան, Արզումանյան 32-10, հեռ.(010) 209777, էլ.հասցե՝ lawyer@c-e.am, ՀՎՀՀ 01210095, տնօրեն Բ.Թաղևոսյան |
| 3 | «ՍԿ Դելտա Թրեյդ» ՍՊԸ | - | ՌԴ, Մոսկվայի մարզ, ք. Լոբնյա, Գագարինի 10, հեռ.(077) 554030, էլ.հասցե՝ kontakt-80@mail.ru, ՀՎՀՀ 5025032109, տնօրեն՝ Հ. Իորդանյան |
| 4 | «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ | - | ք. Երևան, Սարյան 1 ա., բն. 3, հեռ. (010) 539046,(091) 214176, էլ.հասցե՝ mels@arminco.com , ՀՎՀՀ 02548673, տնօրեն՝ Մ. Բաղդասարյան |

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝ հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու, բացված ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին նախնական տվյալներով համապատասխանում են:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

| Չ/հ | Գնման առարկան | Նախահաշվային գին | «Դի.Ջի էյ.Թի.» ՍՊԸ | | «Կոնցեռն -Էներգոմաշ» ՓԲԸ | | «ՍԿ Դելտա Թրեյդ» ՍՊԸ | | «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | առանց ԱԱՀ | Ընդամենը | առանց ԱԱՀ | Ընդամենը | առանց ԱԱՀ | Ընդամենը | առանց ԱԱՀ | Ընդամենը |
| 1 | Լաբորատորիայի, օպտիկական և ճշգրիտ սարքեր (բացառությամբ՝ ապակյա իրերի) | 56000000 | 44567167 | 53480600 | 41250000 | 49500000 | 31968620 | 31968620 | 11053000 | 13269000 |

Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունել ի գիտությունը, որ ընթացակարգի քարտուղարը գնահատման թերթրիկների երկուական օրինակ հանձնեց հանձնաժողովի անդամներին:

Որոշում թիվ 2.
Հանձնաժողովը որոշեց գնահատման արդյունքները ամփոփելու նպատակով գնահատման թերթիկները լրացնել անմիջապես և հանձնել քարտուղարին;

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:
Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, ամփոփվեց մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները, ինչն արտացոլված է ստորև ներկայացված աղյուսակում.

| Մասնակցի հայտի գնահատման չափանիշները Գնահատականը | | | Մասնակցի հայտի գնահատման արդյունքները<br>Մասնակցի անվանումը<br>«Դի.Ջի էյ.Թի.» ՍՊԸ | «Կոնցեռն - էներգոմաշ» ՓԲԸ | «ՍԿ Դելտա Թրեյդ» ՍՊԸ | «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հայտեր պարունակող ծրարները կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին | Բավարար Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| 2 | Բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին. | Բավարար Անբավարար | Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |
| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ | | Բավարար Անբավարար | Անբավարար | Բավարար | Բավարար | Բավարար |

Որոշում թիվ 3.

Հանձնաժողովը որոշեց բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար հետևյալ հիմնավորմամբ՝ հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման, բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանում են և մերժել «Դի.Ջի էյ.Թի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» որոշման 44-րդ կետի 4-րդ ենթակետը, ըստ որի հայտում առկա գնային առաջարկում ներկայացված ընդհանուր գինը ներկայացված չէ տառերով ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա վճարման պահանջագրում լրացված չէ արժույթի կոդը (AMD):

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 4.

Ներկայացված գնային առաջարկների հիման վրա հանձնաժողովը որոշեց 1-ին և հաջորդաբար տեղը զբաղեցնող ճանաչել հետևյալ մասնակիցներին.

-1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Փինք Ֆլամինգո Գ. և Ա. Կենտրոն» ՍՊԸ-ին
-2-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «ՍԿ Դելտա Թրեյդ» ՍՊԸ-ին
-3-րդ տեղ զբաղեցնող ճանաչել «Կոնցեռն -էներգոմաշ» ՓԲԸ-ին

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Որոշում թիվ 5.

Հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետի 1-ին և 2-րդ կետերը հանձնաժողովը որոշեց
1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը.
2) Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնե լիրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա.Սեդրակյան)

Որոշում թիվ 6.

Հանձնաժողովը որոշեց «ՉԱԻ-ԲԸԱՊՁԲ-16/3» ծածկագրով բաց ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը և առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 14:30-ին, ք. Երևան, Կոմիտաս 49/4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի | | |
| Նախագահ՝ | | Ա.Սեդրակյան |
| Անդամներ՝ | | Ա. Օհանյան |
| | | Ս.Մարգարյան |
| Քարտուղար՝ | | Հ. Ղազարյան |